կին հայկազյան, ենթադրում է ըստ իս՝ ուրարտա-խալդական շերտի ծագումը։ Առաջին Հայկազյանների մասին Խորենացու պատմածն ամբողջապես արձագանք է ուրարտական ժամանակների իրադարձության մինչև Սկայորդին, որի անվան մեջ պարզորոշ նշմարվում է սակ արմատի առկայությունը։ Մի այլ տեղ ես առիթ կունենամ ապացուցելու, որ այն, ինչ Մ. Խորենացին պատմում է առաջին Հայկազյանների մասին, ետնագույն հիշողություն է Վանա թագավորների ժամանակի դեպքերի[17]։

Զանգեզուրի հայերի էթնոգենեզի առեղծվածի վրա որոշ լույս են սփռում բարբառագիտական ուսումնասիրությունները։ Վերջին ամփոփող աշխատություններ Զանգեզուրի հայրենի հնչյունական և ձևաբանական երևույթների քննությանը նվիրել են պրոֆ. Հ. Աճառյանը[18] և գրեթե 30 տարի անց՝ պրոֆ. Ար. Ղարիբյանը[19]։ Երկու հետազոտողները դասավորում են այդ բարբառը Ղարաբաղի ենթաբարբառների շարքում, որոնք տարածվում են ընդարձակ տերիտորիայի վրա՝ սկսած Կուր գետի ստորին հոսանքի աջ ափից գրեթե մինչև Ուրմիո լճի ավազանը (Թավրիզ) և արևմուտքում մինչև Գանձակ, Շամշադին և Զագրոշ-Ալանգյազ լեռնաշղթան։ «Նոր Հայերէնի 31 բարբառներուն մէջ ամենէն մեծը, ամենէն տարածվածը Ղարաբաղի բարբառն է» (Հ. Աճառյան), որը մի ճյուղն է «ում» բարբառախմբի։ Իր տարածությամբ այս բարբառը գրեթե համընկնում է պրոֆ. Բունակի վանյան (Ղարաբաղյան) կոչվող մարդաբանական տիպի հետ։ Այս բարբառի առանձին ոստերը շատ են հեռացած բուն արեալից։ Երկու հետազոտողներն էլ գրեթե նույն հնչյունական և ձևաբանական երևույթներն են գտնում Ղարաբաղի բարբառի մեջ, առանց անջատելու նրանից հատկապես Զանգեզուրի ենթաբարբառի համար հատկանշականները։ Սակայն պրոֆ. Ա. Ղարիբյանը, ավելի խորացնելով իր անալիզը, հայտնաբերում է Զանգեզուրում մի նոր՝ 4-րդ ճյուղի առկայությունը, որը նա անվանում է «u» ճյուղ և առանձնացնում է «ում» ճյուղից[20]։ Թողնելով մի այլ առիթի պրոֆ. Ա. Ղարիբյանի այն կարծիքի քննությունը թե «հայ բարբառների «u» ճյուղը կազմավորվել է Սյունի և մեդական ցեղախմբերի և եկվոր սակ (զոկ) ցեղերի լեզուների խաչաձևման հետևանքով»[21], և թե Արդվինի բարբառն էլ պիտի դասվի այդ «u» ճյուղի մեջ, պետք է հիմնավորված համարել նրա հետազոտության այն եզրակացությունը, որ Զանգեզուրում իրար հանդիպել են երկու, իրարից շատ որոշակի տարբերվող բարբառները[22]։ Հյուսիսային շրջաններում, գլխավորապես, Բուն Զանգեզուր կոչվող գավառակում, նույնպես և Սիսիանում մինչև մոտավորապես Արծվանիկ գյուղը գերիշխում են ղարաբաղյան ձևերը, թեև բավականաչափ ազդված «u» ճյուղի կողմից, որ ես գերադասում եմ անվանել ընդհանրապես՝ զոկական և որի

---

[17] Մահվան պատճառով հեղինակին չի հաջողվել ի կատար ածել իր ծրագիրը (ծան. խմբ.)։

[18] «Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Բ, Հայ բարբառագիտություն՝ Մոսկվա, 1911, 61—75 (բարբառների քարտեզով)։

[19] Ա. Ղարիբյան, Համառոտություն հայ բարբառագիտության, էջ 180—198։

[20] Ա. Ղարիբյան, «Հայ բարբառների մի նոր ճյուղ», Պետ. համալսարանի «Տեղեկագիր», Երևան, 1939, № XI։

[21] Անդ., էջ 240։

[22] Այն, որ պրոֆ. Ղարիբյանը գրել է (էջ 184) Զանգեզուրի ենթաբարբառների մեջ նաև Երևանի բարբառը համադրված, բացատրվում է նրանով, որ XIX դ. առաջին կեսում բավականին մեծ թվով տեղափոխված էին (մանավանդ Սիսիան) Նախիջևանի կողմերից հայ գյուղացիք։